

تَنْبِيْهُاتٌ

مَجَلَّةٌ جَمْعِيَّةٌ الْقَاهِرَةُ الْخَيْرِيَّةُ الْأَرْمِينِيَّةُ الْعَامَّةُ

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԱՏԻՐԻԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԵԼՆԸ

مدیر المسئول : ا. صاروخان — ١٥ شارع عماد الدين بالقاهرة — تليفون ٩١٩٦٣٦ — ص.ب. ٧١٧

ԺԷ. ՏԱՐԻ ԹԻԻ 4 - 6

ԱՊՐԻԼ - ՅՈՒՆԻՍ 1974



Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ

Գործ' ԼԵԻՈՆ ԳԱՍՊԱՐԵԱՆԻ

## Հ. Բ. Ը. Մ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն

### Ա. Զ. Դ

- Տեղեկատուին առ այժմ կը հրատարակուի պարբերաբար:
- Թղթակցութեանց, դրամական նուէրներու, գիրքերու, թերթերու եւ հանդէսներու առարուսները կատարել խմբագրութեանս հասցէին.

Խմբագրութիւն «ՏԵՂԵԿԱՏՈՒ»ի

15, Էմատ էլ Տին փողոց — Գանձրէ  
Հեռախօս 919636 — Նամակատուի 717

---

### Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

- 1.— Ս. Մերուպ Մառոնցի Ուղին Ա.ՊԱՀՈՒՆԻ
- 2.— Հիմնարկութեան 68րդ Տարեդարձը Յ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ
- 3.— Ռիչըրտ Մանուկեան Բարեբաւ Անդամ
- 4.— Հայաստանին ՍԱՐՄԷՆ
- 5.— Աղբաս-Հարուսը կամ Կծծիւն ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ՄԱՄՈՒՐ
- 6.— Ա. Մանուկեանի Նախագահութեան 20-ամեակը Լիբանանի մէջ
- 7.— Կարապետ Պէյ Շէրիսնեան Ա. Ա.
- 8.— Գանձրէի Հ.Բ.Ը.Մ.ի Տարեկան Անդամական Ընդհ. Ժողովը
- 9.— Պր. Վարուժան Երեւանի Հեատրալական Հարցազրոյցը
- 10.— Փառաւով Հանդիսութիւն Պուէնոս Այրէսի մէջ
- 11.— Հելիոպոլսոյ Հ.Մ.Ը.Մ.-Նուպարի Կեանքէն
- 12.— Սկուսական եւ Կայսական Ճամայօրի Աղեփանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-Նուպարի մէջ
- 13.— Յորելիմական Հանդիսութիւն

د. نجيب اادو

محلّة جمعيّة القاهرة الخيريّة الأزمنيّة العامّة

# ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԼՏԻՈՒԷԻ Հ.Բ.ԸՄԻՈՒԹԱՆԸ

مدیر المسئول: ا. صاروخان - ١٥ شارع عماد الدين بالقاهرة - تليفون ٩١٩٦٣٦ - ص.ب. ٧١٧

ԺԷ. ՏԱՐԻ ԹԻՒ 4 - 6

ԱՊՐԻԼ - ՅՈՒՆԻՍ 1974

## Ս. ՄԵՍԻՐՈՎ ՄԱՇՏՈՑԻ ՈՒՂԻՆ

Մեր դարաւոր պատկերաստան մեջ ամենեւեմ ստեղծուող շրջանը կը հանդիսանայ հիմնական դարը, որը ծանօթ է Ոսկեդար շրջանընդմեջ: Արդարեւ սուսանդանութեան հանճարեղ դիմելները՝ Ս. Սահակի եւ Ս Մեսրոպի անխոնջ աշխատանքներուն, յօրինուած են հայկական նշանագրերը 404 թուականին:

Եւրոպիայի Ս. Մեսրոպ Մաշտոցի եւ իր աշակերտներուն՝ գրուած ու քարգնանուած են քաղմաթիւ գործեր, աշխատած են ազգին շուքաւորութեան եւ Հայ եկեղեցւոյ պայծասութեան հանար: Եւրոպիայի իրենց անձնուեր գործունեութեան, ծաղկած է մեր գրականութիւնը, քաղմաթիւնուած է Աստուածաշունչը, որ կոչուած է Թագուհի Թարգմանութեանց եւ վերջապէս մեր շեզուն ձոխացած, կրքացած եւ հաւասարացած է ու դարձած աշխարհի ամենեւեմ կատարեալ շեզուններէն մին:

Գրոց գիտէն սուս, քեւ շեզուն գոյութիւն ունէր սակայն գիր չկար: Կարիքը կար հայկական մշակոյթի սարածման, որը կարեղի եր իրագործեղ հայերէն շեզունով ու հայ գիրերով գրուած գրականութեանը:

Ուրեմն Մաշտոցի կատարած դերը անկոխարիւնեղի է, որով ան եր սուսային անգամ յզգացողն ու անոր դարմանը մտածողը եւ աշխատողը՝ հանդիսանալով մեր գերագոյն գանձը եւ մեծագոյն հրաշքը հայ ազգային մշակոյթին:

Ուստի, այսօր անկարան կրնանք շեզ թէ քոչորիս սիրեղի Հ.Բ.Ը.Միութիւնը Ս. Մեսրոպի եւ Ս. Սահակի հիմնած գործն է որ կը շարունակէ, անքող սփիւռքի մեջ անխօս, անեւայն հասարակութեանը: Հայ մշակոյթի եւ հայ կրթութեան իր ծառայութեանը Հ.Բ.Ը.Միութիւնը կը հանդիսանայ միասնականութեան ազգային:

Մասնաւորապէս վերջին տարիներու ընթացքին Բարեկործանիւր հսկայ աշխատանք տարա ու ցարդ կը տանի դարոցներ. մշակութային եւ մարգական կեդրոններ քանալով, սասար հանդիսանալու, հայ պատանիներ եւ հայ երիտասարդներ մայրենի շեզուն աւանդելով ու ջանքելով, որուն միակ մտանդութիւնը ըլլալով՝ նոր սերունդին մեջ արթնցնեղ ու զարգացնեղ հայկականութիւնն ու ազգասիրութիւնը:

Ահա այս քոչորը կը պարտիւն մեր կորովի ցկեանն նախագան Տիար Աշեֆ Մանուկեանին. որուն նախագանութեան 20ամեակն է այս տարի: Ան նիւթապէս ու քարոյապէս կը քաջաղերե ու կը շարունակէ Ս. Մեսրոպի ուղին, որն է հայապահպանում:

Ապրիլն քոչոր անուն մորտն ճիզ չեն խրեւայեր կենտունակ պանելու հանար մեր մայրենի շեզունն ու Մայր Հայրենիքը:

ԱՊՐԻԼԻՆ

# Հայկական Բարեգործական Ընդհ. Միութեան Հիմնարկութեան 68րդ Պանծայի Տարեդարձր

15 ԱՊՐԻԼ 1906 — 15 ԱՊՐԻԼ 1974

Ապրիլ 15ը ազգային մեծ դէպքի մը տարեդարձն է: Զատկական գարնանային այդ օրը՝ 1906ին, Գահիրէի մէջ հիմը դրուեցաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախաձեռնութեամբ անմահանուն Պօղոս Նուպար Փաշայի իր ապարանքին մէջ, գործակցութեամբ իր գաղափարակից ազգասէր 10 նշանաւոր անձնաւորութեանց, որոնց անունները ծանօթ են բոլորին, նպատակ ունենալով. —

ա. - Օժանդակել հայ ժողովուրդի և իր հայրենիքի մտաւոր և բարոյական գարգացման:

բ. - Օգնել նիւթապէս և տնտեսապէս կարօտ ազգայիններու բարելաւման:

գ. - Քաջալերել սոյն արդիւնքները յառաջ բերելու կոչուած ամէն ձեռնարկ:

Հիմնական պայմանը նորակազմ կազմակերպութեան համազգային բարեսիրական հաստատութիւն մը ըլլալը և որեւէ քաղաքական կամ առևտրական կազմակերպութեան հանգամանքէ զերծ ըլլալն է:

Համազգային բնօյթ ունեցող նորակազմ միութեան ազգօգուտ նպատակները համակրանքով եւ խանդավառութեամբ սղջունուեցաւ ազգային բարձրագոյն շքանակներէ սկսեալ մինչև ամէնահամեստ խաւերէն: Ոչ մէկ խմբակցութիւն մինչև այդ երանելի օրը արժանացած էր այնքան գնահատանքի որքան նորակազմ Հ. Բ. Ը. Միութիւնը, մասնաւորաբար այն առեւտրային վեհ. Կաթողիկոսներ Խրիմեան Հայրիկէն, Կիլիկիոյ Կաթողիկոս Տ. Սահակ Բ.էն, Իզմիրլեան և Գուրեան սրբապան պատրիարքներէ, որոնք իրենց սրբատակունդակներով գնահատեցին Միութեան հիմնարկութեան դէպքը և նպատակները օրհնելով անոնց հիմնադիրները:

Նման համազգային բարաւոր կազմակերպութեան մը ծնունդը մեր ազգային

պատմութեան հոյակապ էջերէն մին նըկատուեցաւ: Արդէն նման ազդեցիկ կազմակերպութեան պակասը զգալի էր և անոր հիմնարկութեան իտէալը 1860էն ի վեր փայփայուած առանց սակայն գործադրութեան հնարաւորութիւնը յաջողցնելու: Եւ անա վերջապէս կ'իրականանար մեր ազգասէր մտաւորականներու և ազգային կազմակերպութեանց բաղձանքը այնպիսի ժամանակաշրջանի մէջ, երբ ողջ հայութիւնը կը գտնուէր քաղաքական և ազգային խռովայոյզ վիճակի մէջ:

Միութեան հիմնարկութեան և որդեգրած նպատակներու մասին մեր վերելի լուսաբանութիւններէն ետք, պարտք կը նկատենք վեր հանել անոր 68 տարուայ բազմաբեղուն ազգօգուտ և հայրենասէր գործունէութեան գլխաւոր կէտերը:

Բարեգործականը իր հիմնարկութենէն հազիւ երկու տարի յետոյ, տեղի կ'ունենար երիտասարդ թուրքերու կողմէ գործադրուած Ատանայի ջարդը և կիլիկիան արհաւիրքը: Նորաստեղծ Միութիւնը անմիջապէս իր սահմանափակ միջոցներով օգնութեան փութաց վերապրող ազգայիններուն, որբերուն և ջքաւորներուն:

Այդ չարաղէտ դէպքին յաջորդեց 1915ի Ապրիլեան Եղեռնը: Ժէճն-թիւրք կոչուած բորենիները ի գործ դրին իրենց քստմնելի ծրագիրը՝ կենսունակ ամբողջ ցեղ մը բնաջնջելու և յաջողեցան քաղաքական պայմաններէն օգտուելով գործադրել այնքան վայրագօրէն, որուն զոհ գացին մեր մեծարժէք մտաւորականները հայ մշակոյթի տիրանները և աւելի քան մէկուկէս միլիոն անմեղ հայորդիներ:

Հ.Բ.Ը.Միութեան ազգասէր և անձնուէր վարիչները իսկոյն փութացին օգնութեան աղիտահար վերապրող հայութեան: Զեռնարկեցին որբահաւաքի գործին

և զանոնք պատասպարեցին յատկապէս հիմնըւած որբանոցներու մէջ, աշխատանքի կարօտ ազգայիններուն համար բացին արեւտանոցներ:

Այնուհետև Բարեգործականը կը լրծւի ընդարձակելու իր գործունէութեան դաշտը, հիմնելով կեդրոնական շրջանային յանձնախումբեր, բազմաթիւ մասնաճիւղեր: Ամերիկայէն եւրոպա, Արժանթին, Եգիպտոսէն Միջագետք, Միջին և Մերձաւոր երկիրներու մէջ, դառնալով այսպէս տարածուն, ամրակուռ հաստատութիւն մը, 20.000 անդամներով և շուրջ 20 միլիոն տոլարի դրամագլուխով:

Այսպէս Հ. Բ. Ա. Միութիւնը օրըստօրէ գօրացած եւ ուռճացած իր ուշադրութիւնը առաւելապէս կեդրոնացուց հայ տարագիր ժողովուրդի բարոյական և իմացական վերելքին և ազգապահպանման գործերուն մէջ: Այս նպատակաւ հիմնեց հայաշատ գաղութներու մէջ նախակրթարաններ և երկրորդական վարժարաններ ինչպէս Կիպրոսի մէջ Մելգոնեան բարձրագոյն կրթարանը Լիբանանի մէջ Գարուհի Յակոբեան աղջկանց երկրորդական վարժարան, Արժանթինի մէջ Մարի Մանուկեան երկրորդական վարժարանը և զանազան ուրիշ կրթարաններ սփիւռքի հայահոծ գաղութներուն մէջ մեծանուն բարերարներու կրտսակներով 250ի մօտ ուսանողներու յատկացուց համալսարանական կրթաթոշակներ:

Բարեգործականը նոյնպէս օգտակար հանդիսացաւ բարձրաբերձ Արարատի փէշերուն տարածուած նորածիլ, հայրենիքին կատարելով հայրենաշէն ձեռնարկներ: Երևանի մէջ հիմնեց Մայրանոց, անկելանոց ակնաբուժարան Նուպարաշէն և Եւգոկիա աւանները:

Ազգապահպանման մարզի մէջ Բարեգործականի ամէնանշանակելի գործը եղաւ, մեր 600 տարուայ պատմութեան էջերուն մէջ աննախընթաց երևոյթը եղող ներգաղթը որու ընծայեց իր նիւթական և բարոյական օժանդակութիւնը:

Մշակութային գետնի վրայ ևս մեծ եղաւ Բարեգործականի գործունէութիւնը կատարելով ազգօգուտ ձեռնարկներ: Փա-

րիզի մէջ հիմնեց Մարի Նուպար Ուսանողական Ոստանը, Նուպարեան Մատենադարանը, Լիբանանի և Սուրիոյ մէջ կազմակերպեց մշակութային-մարզական ընկերակցութիւններ Ալեք Մանուկեան մշակութային կեդրոն, ազգային բարերար Հիւսիսեան հիմնարկը և ըն:

Երկար է շարքը Բարեգործականի կատարած ազգօգուտ գործերուն: Տեղին է շեշտելու թէ Բարեգործականի հմայքը, վարկը և հայ ժողովուրդին և մասնաւորաբար ունեոր դասակարգին անոր հանդէպ տածած համակրանքը և անվերապահ վստահութիւնը պէտք է վերագրել միութեան երջանկայիշատակ հիմնադիր Պօղոս Նուպարի և անոր յաջորդող կարող և կորովի նախագահներուն՝ Գալուստ Կիւլպէնկեանի, Զարեհ Պէյ Նուպարի, Արշակ Գարակէօզեանի և այժմու ցմահ նախագահ և ազգային մեծագոյն բարերար Տիար Ալեք Մանուկեանին միջազգային չափանիշով ունեցած փայլուն դիրքերուն, վարկին, համբաւին և զօհողութեան ոգիին:

Կ'արժէ հոս առանձնապէս վեր հանել միութեան ներկայ ցկեանս նախագահ Տիար Ալեք Մանուկեանի անստգիւտ արժանիքները և անոր մեծագործութիւնները յօգուտ միութեան յարաճուն վերելքին, անոր նախագահութեան 20ամեակին առթիւ որ կը զուգոգրի Բարեգործականի հիմնարկութեան 68րդ տարեդարձին:

Բարեգործականի Պատուարժան Կեդրոն, վարչութիւնը վերջընտիր նախագահ Արշակ Գարակէօզեանի մահէն վերջ գնահատելով Տիար Մանուկեանի գերընտիր յատկութիւնները 1953ին անոր վստահեցաւ Միութեան նախագահի բարձր պաշտօնը:

Այս օրերս սփիւռքի ամբողջ տարածքին վրայ Բարեգործականի զանազան մարմինները և հովանաւորեալ կազմակերպութիւնները մեծաշուք հանդիսութիւններով կը նշեն Տիար Մանուկեանի նախագահութեան 20րդ բարեբաաստիկ տարեդարձը:

Անդրադառնալով Բարեգործականի մաստուն ղեկավարի իր գերին, աւելորդ կը նկատենք մանրամասնութեանց մէջ

մտնել, ցոյց տալու համար թէ միութեան դպրոցներուն, Ամերիկայի մէջ դպրոցաշինութեան գործին, երիտասարդական կազմակերպութեանց, նպաստի ձեռնարկներուն, մեծարժէք զանազան կարգի շինութիւններուն ինչ աննախընթաց թափ ու ու փայլ տրուեցաւ իր օրով իր ինքնամատոյց մեծագումար նուիրատուութիւններուն շնորհիւ:

Թէպէտեւ Բարեգործականի նման համազգային մեծագոյն կազմակերպութեան մը նախագահի պաշտօնը ինքնին յարգանք կը պարտադրէ ամէն հայու և սակայն Տիար Մանուկեանի պարագային այդ յարգանքը կը զգենու բոլորովին ինքնուրոյն նկարագիր: Եթէ մեծայարգ նախագահին պաշտօնին խղճամիտ և արդիւնաշատ կիրարկումը միայն ըլլար գուցէ չի պիտի վայելէր համազգային այն յարգանքը զոր կը վայելէ այսօր իբրև մեծագոյն հայ իր ցուցաբերած զոհարեութեան սկիզբ և ազգային կարիքներու գիտակցութեամբը ազգին տրամագրելով նոյն հետայն իր միտքը և հոգին:

Ներկայ բարդ և դժուարին կացութեան մէջ, եթէ Բարեգործականի ղեկին գլուխը չի գտնուէր Տիար Մանուկեանի պէս անզուգական գէմք մը, դժուար թէ Բարեգործականը կարենար դիմագրանել ազգին բազմատեսակ կարիքները և հասնիլ այսօրուան պատուարեր բարձունքին: Անոր ունեցած հմայքը և իշխանական նուիրատուութիւնները մզիչ ուժը եղան վերջին տարիներուն անհամեմատօրէն բազմապատկուած մեծագումար կտակներուն և նուիրատուութեանց, որոնց շնորհիւ Բարեգործականը կարողացաւ ընդարձակել իր գործունէութեան դաշտը:

Ուստի Տիար Ալեք Մանուկեանի նախագահութեան բարեբաստիկ տարեդարձին առթիւ, ի խորոց սրտէ կը մաղթենք անոր արեւշատութիւն և առողջութիւն կարենալ ղեռ երկար տարիներ մնալու Միութեան գլուխը ազգին և ի փառս Հ.Բ.Բ.Միութեան:

Յ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Ձ Ե Կ Ո Յ Ց

**ՌԻԶԼՐՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ**

**Հ. Բ. Բ. ՄԻՈՒԹԵԱՆ**

**ԲԱՐԵՐԱՐ ԱՆԴԱՄ**

Հանրութիւնը ծանօթ է արդէն, թէ Մաֆօ Ընկերութիւնը, որուն կեդրոնատեղին է Թէյլըր, Միչիկըն, շուրջ ամիս մը առաջ 250.000 տղար նըւիրեց Հ.Բ.Բ.Միութեան, Տիար Ա. Մանուկեանի նախագահութեան 20ամեակին առթիւ եւ առ ի գնահատութիւն իբրեւ Ընկերութեան Հիմնադիր եւ Տնօրէն Խորհուրդի Ասեմապէս անոր մատուցած երկարամեայ եւ նըւիրեալ ծառայութեանց:

Այսու հանոյժով կը ծանուցանենք, թէ Կեդր. Վարչ. Ժողովը իր վերջին նիստին երախտագիտութեամբ ընդունեց այն մեծագումար նուիրատութիւնը եւ ի նշան ջերմ գնահատանքի Միութեան Բարեբար Անդամ հոչակեց Մաֆօ Ընկերութեան նախագահ, երիտասարդ հանրածանօթ ֆարսարուեստական Տիար Ռիչըրտ Մանուկեանը, արժանաւոր որդին Յկեանս նախագահ եւ Տիկին Ա. Մանուկեանի:

Առիթէն կ'օգտուինք հրապարակաւ մեր խորին շնորհակալութիւնը յայնմելու Մաֆօ Ընկերութեան եւ անոր նախագահին, որոնց վեհանձն նըւիրատութիւնը աւելցաւ Միութեան Ա. Մանուկեան Մշակ. Հիմնադրամին վրայ:

ԳԻԻԱՆ

ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻԹ

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ն

Ես՝ որդեգիրը նոր Հայաստանի,  
 Տեսած ահաոր օրեր փոթորկուն,  
 Կանգնած եմ ահա իմ մայր ոստանի  
 Լայնասիրտ ու վեր հրապարակում:  
 Դիւթոնած նայում եմ շէնքին փառատես՝  
 Գլխին՝ դրօշը վառ ու փողփողուն,  
 Որ Մասիսի դեմ ու Մասիսի պէս,  
 Յաւերժ հիմնուած հայրենի հողում,  
 Խորհրդանիշն է հայոց տերութեան,  
 Յուշարձանը մեր անմահ գոյութեան:

\* \*

Աղբի՛ւր իմ, աղբի՛ւր, դու զօր ու զիշեր  
 Ծարաւածների կրակն ես մարում,  
 Քեզ մօտ է գալիս՝ ում վիշտն է մաշել,  
 Եւ նա՛ ով հոգսեր ջուհի աշխարհում:  
 Դու բարութիւն ես բաշխում բոլորին,  
 Քեզ համար ջկայ աղբաւ ու հարուստ,  
 Ծով ջէս, բայց սիրտը՛ ծովից էլ խորին,  
 Արարջութիւնն է դրել քեզ վերուստ՝  
 Որ դու ջրի՛ց հետ սեր տաս աշխարհին:

\* \*

Զգիտեմ ինչո՞ւ վերջալոյսն ու ես  
 Ախոյեաններ ենք հնուց, շատ հնուց,  
 Զեմ սիրում նրա տեսքը տխրահեզ  
 Ու մահացումը այնպէս հոգեցունց:  
 Ես արշալոյսն եմ խենդօրէն սիրում,  
 Որ խնդութեամբ է լցնում ողջ աշխարհ,  
 Որ կոկոնում է խորունկ խաւարում  
 Ու բացուում որպէս ծաղիկ հրավառ:  
 Արշալոյսն ու ես, ես ու իմ աստուած,  
 Զոյգ եղբայրներ ենք՝ մի մօրից ծնուած:

\* \*

Հագարապատիկ օրհնուած լինես դու,  
 Որ իմ ցուրտ օրին ինձ հանդիպեցիր,  
 Եւ սիրտը պատող իմ մահագոհչակ  
 Մառախտեղները բոլոր ցրեցիր:  
 Հիմա գարուն է շուրջըս, ամենուր,  
 Այգեստաններըս ծաղկել են զուարթ,  
 Եւ ասես մեկը նուիրել է ինձ  
 Դանձեր անհամար, աշխարհներ անձիր:

ՍԱՐՄԷՆ

ՄԱՍՆԱԻՈՐ «ՏԵՂԵԿԱՏՈՒ»ԻՆ

**ՊԱՏՄԱԿԱՆ**

**ԱՂՔԱՏ - ՀԱՐՈՒՍՏԸ ԿԱՄ ԿԾԾԻՆ**

Վերեւի վերտառութեան մեջ «Աղ-  
քատ» բառը գործածուած է որպէս անա-  
կան, «Հարուստ» բառը որպէս գոյական, եւ  
ասիկա իրական պատմութիւնն է:

Որեւէ դարու մեջ, որեւէ տեղ եւ ժա-  
մանակ, այսպիսի մարդիկ գտնուած են ինչ-  
պէս ամեն ոք գիտէ, եւ երբ գրուեալն  
բարոյական դասը իր տեղը երթայ, գոհ պի-  
տի մնանք որ բանի մը ծառայած կ'ըլլան  
մեր պրպտումներն ու գիրք:

Եւ եղեւ այսպէս...

\* \* \*

Կար ու չկար մէկը կար դրամով հա-  
րուստ, ըստ բաւականին խելք ալ ունէր,  
ոչ թէ չունէր բայց զայն գործածելուն  
կերպը տակաւին լման չէր սորված: Մին-  
չև որ սորվեցաւ ուչ մնացած էր, մեռաւ  
ու չի վայելեց, ուրիշներ եկան ու մսխելին  
ունեցածը: Սատանան նոյնիսկ երբեմն կը  
քրտնէր իրեն խարելու համար, թերեւս  
այդ էր որ իր ուղեղին պատկան մասը  
կարծրացուցած էր որ կ'անդրադարձէր  
միւս այն մասին ուր տասաներորդի, նը-  
ւիրատուութեան, բարեգործութեան խոր-  
հուրդները տեղի կ'ունենան: Ամուսնացած  
ալ չէր, «ինչո՞ւ ուրիշը պիտի գայ դրամ  
պիտի ուտէ» կ'ըսէր:

Ազգային մարմիններու դրամարկղի  
«մուտք»ով գրադողները յուսահատելու վը-  
րայ էին իրմէ, երբ սատանան վերինք գըր-  
դեց ու մղեց որ վերջին վճռական ճիգ մըն  
ալ ընեն, այս անգամ չ'ընկրկելու հաստատ  
դիտաւորութեամբ: Ամէն ջանք պիտի թա-  
փէին մեծ թէ փոքր բան մը փրցնելու իր-  
մէ, միտք բանին այլեւս գումարը չէր  
այլ «փրցնելու» սկզբունքը նայելու համար  
թէ ով պիտի յաղթէր, որով օրին մէկը  
բոլոր մարմիններէն մէկական ներկայա-  
ցուցիչ իրար գալով խումբ մը կազմեցին  
և քահանան առջեւնին ձգելով ներկայա-  
ցան իրեն:

Ատենն ալ յարմար էր գործի թեթև  
մէկ ժամանակին: Բայց մարդը այդ ինք-  
նակոչ բազմութիւնը տեսնելով և այցելու-  
թեան խորքին իրեն որքան անսխորժ ըլ-  
լալը կռահելով, մոռցաւ նոյնիսկ իր սովոր-  
ական յարգանքը ընծայել իրենց «բարի  
եկաք»ով, «հրամեցէք այսպէս նստեցէք»  
չարունակելով, և «ինչո՞վ կրնամ օգտա-  
կար ըլլալ ձեզի» վերջացնելով:

Յամենայն դէպս բոլորն ալ նստան,  
բոլորին դէմքին վրայ ալ լուրջ արտայայ-  
տութիւն մը կար ընելիքնին ընկուռ, ըսե-  
լիքնին ըսելու, ի՞նչ կ'ուզէր ըլլար հետե-  
ւանքը: Մտքերնէն բնաւ չէր անցներ այն  
միակ հետեւանքը որ իսկապէս տեղի ու-  
նեցաւ, վերջին զղումնին ալ օգուտ չը-  
րաւ:

Քահանան սկսաւ.

— Աղա, գլուխդ ցաւցնելու չենք եւ-  
կած, ոտքդ պահնելու եկած ենք: Փի-  
տես որ մեր ազգին հազարումէկ տեսակ  
կարիքներուն եթէ քեզի պէս «Աստուածը  
տուած»ները չի հասնին մենք չենք կրնար  
զլուխ ելլել ուէ մէկ ցաւին հետ: Մեր ե-  
կեղեցին քեզի պէս մէկը շինել տուեր է  
ժամանակին մինչև այսօր կ'աղօթենք մէ-  
ջը. մեր զպ ոցը մէկը խոշորիեկ գումար  
մը դրեր է ուրիշներ ալ մէյմէկ քիչ ա-  
ւելցուցեր են բան մը մէջտեղ բերեր են,  
մեր պատիկները փողոցները չեն մնար կամ  
օտարներու երթալով օրին մէկը բոլորո-  
վին մեզմէ բաժնուիր. մենք ինչ գլխու  
ցաւեր ունինք աղա, որոնց սիրայօժար  
ժամանակ ու յոգնութիւն կը տրամադրենք  
որպէսզի մերինները ամփոփ մնան որպէս  
հաւաքականութիւն և շուծանան, օտար-  
ները զանոնք մեզմէ չի խլեն. եթէ ասի-  
կա մենք չընենք, եթէ մենք մեր հոգերը  
չի տանինք, մեր զանգուածները պիտի  
կորսուին մեզմէ ինչպէս ժամանակին ե-  
զեր է քանի քանի անգամ քիչ մը աշ-



խարհի ամէն կողմ: Մերիններուն ար-  
ցունքները մենք պիտի սրբենք ազա, ու-  
րիչը չի նայիր: Ինչպէ՞ս հասկցնեմ, ինչ-  
պէ՞ս ընեմ որ գուժի շարժեմ և բան մը  
տաս, մանաւանդ որ շատ ունիս, եթէ տա-  
սաներորդը չես ուզեր տալ հարկերորդը  
տուր այդ ալ կը բաւէ: Աղա, ինչ ըսիր:  
Աղան քահանային քովը նստողին և-  
րեսը նայեցաւ:

— Ես Աղքատախնամին ներկայացու-  
ցիչն եմ: Մեր ցանկերուն վրայ երեք հա-  
րիւր աղքատ ունինք որոնց ամէն ամիս  
որոշ գումար մը կը վճարենք: Այս ամէն  
մէկուն եթէ շատ չնչին գումար մը տանք  
ամսական, գոնէ քանի մը սակի, նորէն  
ընդհանուր գումարը բան մըն է, տարե-  
կանն ալ նայեցէք ուր կ'երթայ: Մենք  
ուրկէ՞ պիտի վճարենք ասիկա եթէ ձեզ  
նմաններ յատկացում մը չընեն մեզի: Կա-  
րիքն է որ մեզ կը մղէ ձեր դուռը ափ առ-  
նելու ապա թէ ոչ հեռու մեզմէ գալ ձեզ  
անհանգիստ ընել այս ձեռով: Որքա՞ն գիւ-  
րին ու հեշտ պիտի ըլլար որոշ գումար մը  
տալ ամոքելու աղքատին ցուերը, ներքին  
արտակարգ դոճուսակութիւն մը, տաքու-  
թիւն մը համակ որ կը պատէ զձեզ ինք-  
նին արդէն պիտի երկարէր ձեր կեանքը և  
Աստուծոյ հովանին կրկնապատկեր կամ  
քառապատկեր ձեր եկամուտը: Ասանկ բա-  
ներ կան դուք մեզմէ լաւ գիտէք, ինչո՞ւ  
ուրեմն չօգտուիք և միասնաբար չիրակա-  
նացնենք Աստուծոյ պարգևած կեանքի եր-  
ջանկարիւր ընթացքը: Կը խնդրենք որ չի  
մերժէք զմեզ:

— Անցեալները ձեր ըսած աղքատնե-  
րէն մէկը մեռեր է քովէն տասըհազար ըս-  
թերլին ոսկեգրամ ելեր է իրեն պառկած  
չուլին տակը կը պահէ եղեր:

— Ատիկա հազուագիւտ բացառու-  
թիւն մըն է որու համար իսկական աղ-  
քատները պէտք չէ որ տուժն:

— Իսկական աղքատ չէ մնացած հի-  
մա, ամէնքն ալ մեզմէ հանգիստ են հոգի  
մի ընէր, անոնց տքալուն ֆսալուն մի  
նայիր ամբողջ սուտուփուտ դերասանու-  
թիւն է մեղք ձեզի որ կը խաբուիք, ար-  
դէն ձեզի խաբելը շատ դիւրին է: Հիմա  
այս տէրպապան չիկա՞յ քովդ նստեր. է,

ուէ չի չանչցած մէկը երթայ քիչ մը ար-  
ցունք թափելու ըլլայ երէցկիւնին կ'ըսէ որ  
պնակ մը կերակուր դնէ առջևը փորը կը շ-  
տանայ: Դուն աղքատներուն հոգեբանու-  
թիւնը չես գիտեր աղքատ ըսելով պիտի  
հասկնաս որ ոչ թէ գրպանը դրամ չկայ  
այլ խելապատակին պտուկը պակաս է քիչ  
մը: Յետոյ որքան ալ քննես չես կրնար  
մէկու մը ունեցած դրամը գտնել կամ  
հասկնալ թէ ինչ ունի, խօսելակերպէն կամ  
ապրելակերպէն բնաւ յայտնի չէ ատիկա:

Աղան քահանային միւս կողմը նստո-  
ղին նայեցաւ:

— Ես Որբախնամէն եմ:

— Ինծի Որբախնամ չի հուլովես, հի-  
մա որք չէ մնացած, ատիկա առաջին մեծ  
պատերազմէն վերջ էր բաներ մը եղաւ  
լմնացաւ:

— Ինչպէ՞ս թէ չէ մնացած, որք ըսե-  
լով կը հասկնանք անչափահաս մը որ հայր  
մայր չունի, կամ երկուքէն մէկը մեռած  
է ու միւսը չի կրնար առանձինն հոգալ  
պատիկին կարիքները: Կը քննենք մէն մի  
ներկայացած պարագան ու կը ջանանք օգ-  
տակար ըլլալ — հաց ու պարէն տալով,  
կամ դպրոց ղրկելով, կամ գործ մը ճարե-  
լով որ քանի մը զրուշ վաստկի տունին  
նայի, երբեմն բնակարան ալ գտնելով, ուր  
փողոցը մնացած են, վերջապէս կարիքները  
անպակաս են, հազուստ ալ կուտանք:

— Այդ հագուստները կը ծախեն եղեր  
քիչ մը կարկտան ընելով ահագին դրամ  
կը վաստկին, հարկերին հազար զուտ շահ  
եթէ ըսեմ որպէս տոկոս քիչ է, հիմա այդ  
բոլոր տոլապ-տալալէրանները այլևս վա-  
ճառականութեան սքեմ ստացած են և մեր  
վրայ ազդեցութիւն չեն կրնար բանեցնել,  
քեզի օրինակներ կրնամ բերել իսկական  
կեանքէ որ զարմացնէ բոլորդ: Չէ, այդ  
ալ չեղաւ:

— Ես Բարեգործականի ներկայացու-  
ցիչն եմ:

— Հա՛, կտրեց մարդը, ատիկա նա-  
յէ խելքիս կը պառկի: Սուելու հարկ չկայ  
Բարեգործականը ինծի ծանօթացնելու, ամ-  
բողջ աշխարհ լսած է անոնց մաքուր, կա-  
նոնաւոր և օգտաշատ գործունէութիւնը,  
արդէն եթէ մեր ազգին մէջ մէկ հատ

# Ա.Լ.Ե.Ք ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ 20ԱՄԵԱԿԸ ՀԱՆԴԻՍԱԻՈՐԱՊԷՍ ԿԸ ՆՇՈՒԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ

ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԳԷՍԻ ԸՆԹԱՑՔԻՆ

Պերճաշուք փայլ մը ստացաւ Բարեգործականի այս տարուան ճաշկերոյթպարահանգէսը: Արդարեւ, Պէյրութի ընտրանին ժամադրուած էր Շաբաթ, 6 Ապրիլ 1974ի երեկոյեան, Ալեք Մանուկեան Կեդրոնի Ա. յարկի մեծ սրահը, որ գեղազարդուած էր ճաշակաւոր կերպով գեղանկարիչ Գրիգոր Նորիկեանի կողմէ, իւրայատուկ միջոցառում մը ստեղծելով՝ մոտաքէն սկսեալ:

Կէս գիշերին, երբ կոչնականներուն տրամադրութիւնները բարձր էին Ատիս Հարմանտեանի մենակատարութեամբ՝ իր ճոխ նուագախումբին ստեղծած խանդավառութեամբ, Պէյրութի Մասնաժողովի ատենադպիր Պր Վ. Պահատրեան ծանոյց Միութեան ցկեանս նախագահ Տիար Ալեք Մանուկեանի 20ամեայ պաշտօնակալութեան տարեգարձը (1953-1973) ծափողջոյններու ջերմ ալիքներ բարձրացնելով

խելքը-զլուխը կազմակերպութիւն կայ ան ալ այդ է: Եթէ օրին մէկը բան մը ընելու ըլլամ, ան ալ Բարեգործականին միջոցաւ պիտի ընեմ ատիկա, գիտցած ըլլաք, ուր առաւ-փախաւութիւն չկայ, կանոնաւոր հաշիւ կայ, անանկ որ զլուխս արդուկելու ալ պէտք չկայ. չի՞ բաւեր այսքան խօսակցութիւնը, զլուխս ցաւիլ սկսաւ:

Տակաւին Դպրոցասիրացին, Եկեղեցասիրացին, Կրթասիրացին, Ազգասիրացին և Բարեսիրացին ներկացուցիչները չէին խօսած:

Մարդուն պաշտօնեաները ականատես և ականջալուր վկանները եղած էին այս բոլորին, հետզհետէ ներս գալով և անխօս մտիկ ընելով: Վազեցին օգնութեան բայց ուշ մնացած էին, հեռաձայնեցին ռժիշկին, վազելէն եկաւ հաստատելու մահը «hémorragie cérébrale» անուան տակ:

— Ես Հ.Մ Ը.Մ-ի ներկայացուցիչն եմ, սկսաւ անոր քովը նստած երիտասարդը: Մենք հոգ կը տանինք որ առողջ մարմնի մը մէջ. այսօրուան երիտասարդութիւնը վաղուան լիտըրները պիտի ըլլան մեր ազգին, չի փաւեր ապրուստ-կապուստը, բնակութիւնը և դաստիարակութիւնը, անհրաժեշտ կարիք մըն ալ մենք կ'ապահովենք, մեր գործունէութիւնն ալ լայնածաւալ ըլլալու կը ձգտի, կուսակցական խտրութիւն ալ չունինք: Շատ կը ցաւիմ Պարոն, որ գլուխնիդ ցաւիլ սկսած է, բայց բոլորս մէկ այսօր հոս եկած ենք վճռական որոշմամբ որ տեղերնէս պիտի չջարժինք մինչև որ հաճիք մեզի կամ մեզմէ մէկուն անուազն որոշ յատկացում մը ընել: Այլեւս որոշումը ձեզի կ'իյնայ, ի՞նչ ըսիք,

Փառաւոր թաղում մը կատարուեցաւ:

Հարց ծագեցաւ թէ այդ ն'րկայացուցիչ ըստածները իբրև ոճրագործ հարկ էր ամբաստանել թէ ոչ, ազգեցութիւն բանեցուեցաւ որ թող տան զիրենք, թէև ցընցըւած էին:

Մարդուն դրամները օտարները եկան կերան մէկ-մէկ պատրուակաւ: Երկար ատեն խօսակցութեան նիւթ դարձաւ այս պատահարը և «ո՞վ շահեցաւ, ո՞վ կորսընցուց» հարցումին ալ պատասխան չի գրտնըւեցաւ:

Մարդուն գոյնը նետեց, տարօրինակ արտայայտութիւն մը եկաւ. դէմքին վրայ, արիւնը ուղեղին ժայթքեց, զլուխը վար ինկաւ ու... մեռաւ:

Ամենէն վերջը խմաստունին մէկը եւ ըրափակեց.

«Ազգին ներկայացուցիչները չէին կրցած մարդուն սիրտը շահելուն կերպը գտնել, ամէն մարդ տկար կողմ ունի, զայդ գտնել ու այդ խողովակով մօտենալը թերևս աւելի արդիւնաբեր ըլլար»:

ՅՈՎՍԷՓ ՎՐԴ. ՄԱՄՈՒՐ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

# ԿԱՐԱՊԵՏ ՊԵՅ ՇԷՐԻՏՃԵԱՆ

(ՄԱՀՈՒԱՆ ՅԻՍՆԱՍԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ)

1906 Ապրիլ 15ին, Հ.Բ.Ը.Միութեան հիմնադրութեան օրը ներկայ գտնուողներէն եւ առաջին նիստի ատենագրութիւնը ըստօրագրողներէն մէկն է:

Շերիտճեան Պէյ, ծնած է Իգմիւր եւ շատ կանուխէն Յգիպտոս հաստատուած:

Մտած է եգիպտական գիւհնաւորի աւան ասպարեզը, վարելով բարձր պաշտօններ, 40 տարիներ անընդմիտ:

Յգիպտոսի հայոց փառքի շրջանին, ուր Նուպար Փաշա եւ Տիգրան Փաշա

Տ'Ապրօ այնքան կարեւոր դեր մը կը կատարէին՝ երկրին վարչութեան մէջ, Շերիտճեան Պէյ անոնց հովանիին տակ, սպրած է



ներկաներուն մօտ: Ապա ան անմիջապէս բեմ հրաւիրեց Լիբանանի Շրջանակային Յանձնաժողովի ատենադպիր Պր. Հայկաշէն Ուզունեանը, որ հանգամանօրէն կուռ անդրադարձում կատարեց սփիւռքահայ մեծագոյն բարերարի մասին:

Պր. Ուզունեանի ներշնչող խօսքերէն ետք, բեմ հրաւիրուեցաւ Շրջանակայինի կազմը և պատուակալ անդամ Փրոֆ. Բ. Թովմասեան, առաջնորդութեամբ ատենապետ Տէր և Տիկ. Կարպիս Նազարեանի, որոնք նուազի ընկերակցութեամբ կտրեցին 20ամեակի յատկապէս պատրաստուած հսկայ կարկանդակը: Թանգավառութիւնը հասած էր իր գագաթնակէտին, պարարեմը յորդեցաւ պարող զոյգերով՝ նուազախումբի կըռօյթներուն անձնատուր: Շէնչող ու կենսուրախ մթնոլորտը շարունակուեցաւ մինչև վաղ առաւօտեան ժամերը, միայն մէկ անգամ ընդհատուելու համար վիճակահանութեամբ, որ ներկաները բախտաւորեց արժէքաւոր պարգևներով:

Միասնաբար Պէյրութի Մասնաժողովին ու Պօղոս Գ. Կարմիրեան վարժարանի Շիւնութեան Յանձնախումբին կողմէ կազմակերպուած այս յաջող ձեռնարկին հասոյթները պիտի տրամադրուին նորակառոյց վարժարանի շիւնութեան ծախսերուն: ԹՂԹԱԿԻՑ

### Կարապետ Պէյ Շերիտճեան

Յգիպտոսի միջազգային ամենապերն շրջանակներուն մէջ՝ յարգուելով տեղացի թէ օտար պաշտօնական եւ ընկերական ամենանշանաւոր ներկայացուցիչներէն:

Կարապետ Պէյ Շերիտճեան 1906ին միջեւ 1924, իր մահը, Հ.Բ.Ը.Միութեան Վերին Մարմնի անդամակցած է խղճմտօրէն եւ եռանկով:

Ան քառասուն տարի պետութեան ծառայել է ետք, հանգստեան կոչուած էր, Ֆիզիքապետ կայսուս վիճակի մէջ:

Վախան Մալեկեան Բարեգործականի Ոսկեմատուանին մէջ (1906-1931), կը գրէ. «Հ.Բ.Ը.Միութեան Կեդր. Վարչական Ժողովի անդամ, Կարապետ Պէյ Շերիտճեան մին եղած է այն տասնեակ մը անձնաւորութիւններէն, որոնք Ն. Վ. Պօղոս Նուպար Փաշայի հովանաւորութեան տակ՝ նախ տաճարակրեցին միութեան գաղափարի երկունքը, ապա անոր դայեակներն եղան,

զայն փայփայեցին, անոր զարգացումի եւ  
ուսողը ազատագլին հսկեցին և այսօր իրա-  
ւամբ կրնան պարծենալ անոր բարգաւա-  
ճութեամբն ու նուիրագործումովը»:

Մեծ հմտութիւն ունէր ամեն տեսակ  
փրթոզողներու, կենցաղագիտական, յարա-  
բերական կանոններու եւ անհրաժեշտ ձե-  
ռակերպութիւններու:

Հ.Բ.Ը.Միութեան հիմնադիրներէն ըլ-  
լայե զատ նշանակելի մասնակցութիւն մը  
ունեցած է Գահիրէի Ազգ. Առաջնորդարա-  
նի ժողովներուն մէջ եւ մասնաւորապէս  
շահագրգռուած է կրթական գործով: Ան-  
դամակցած է զպրոցի հոգաբարձութեան եւ  
կրթական գործով զբաղուող յանձնաժողով-  
ներու:

Իսկ ինչ որ ամենէն աւելի նշանակե-  
լին է. պետք է յիշատակել քե Կարապետ  
Պէյ Շէրիտեան եղած է պատմաւ. հիմնադ-  
րութեան Նուպարեան Մատենագարանին,  
վասն զի, ինք՝ մտաւորական, սիրահար գե-  
ղեցիկ պարութեանց եւ արուեստներու, ըս-  
տանձնած է Հ.Բ.Ը.Միութեան կեդրոնական  
Գրադարանի վարիչի պատուակալ պաշտօ-  
նը, իր ընտիր ու նոյն գրագարանը նուիրե-  
լով Միութեան: Ինչպէս Վ. Մայեզեան կը  
գրէ, ան ոչ միայն իր գիրքերը նուիրած է,  
այլ չէ դադրած գործարարանք տաճել այդ  
գիրքերուն վրայ, յանձնա գալով Բարեգոր-  
ծականի գրասենեակը, ժամերով զբաղելով  
Միութեան Գրադարանին մէջ, դասաւորե-  
լով գիրքերը, հսկելով անոնց կանոնաւոր  
շարքին, ընդունելով գրեցական նոր նուի-  
րատուութիւնները եւ թղթակցելով բոլոր  
այն բարեւեր ազգայիններուն հետ, որոնք  
տրամադիր էին նոխացնել Միութեան Մա-  
տենագարանը, որ յետոյ Փարիզ պիտի փո-  
խագրուէր՝ կազմելու համար առաջին եւ  
գլխաւոր կորիզը Փարիզի Նուպարեան Մա-  
տենագարանին:

Շէրիտեան Պէյ, այսպէս կատարած է  
երախտագիտութեան արժանի գործ մը, որ  
իր անունը կը կապէ հայ կարեւոր ճա-  
տատութեան մը՝ Եւրոպայի Մատենագա-  
րանին հետ:

Ա. Ա.

## ԳԱՀԻՐԷԻ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԸ

Ուրբաթ, 29 Մարտ 1974, կ. ե. Ժամը  
5ին, տեղի ունեցաւ Միութեան հարաբա-  
վայրին մէջ, Գահիրէի Հ.Բ.Ը.Միութեան  
Մասնաժողովի տարեկան անդամական  
Ընդհանուր ժողովը, ատենապետութեամբ  
Պր. Յակոբ Էքսերեանի եւ ատենագրութե-  
ամբ Պր. Նորայր Տ՛օվլէթեանի:

Ներկայ էին 22 ձայնատու անդամներ  
եւ 6 փոխանորդագիրներ, գումար 28, ինչ  
որ կը լրացներ օրինական թիւը ժողովը ըս-  
կըսելու:

Յարգելի ատենապետին խնդրանքով  
ներկաները մէկ վայրկեան լուսութեամբ յար-  
գեցին յիշատակը 1973 տարեշրջանին մա-  
հացած Միութեան արժանաւոր անդամ-  
ներուն:

Կարգացուեցաւ վարչութեան տարե-  
կան տեղեկագիրը, որը կը պատկերացներ  
Միութեան տարեկան ընդհանուր գոր-  
ծունեութիւնը կրթական, մշակութային եւ  
այլ մարզերու առընչութեամբ: (Սոյն տեղե-  
կագիրը կուտանք յաջորդ էջով):

Անցնելով նիւսական համարատուու-  
թեան՝ կարգացուեցաւ 1973 տարեշրջանի  
հաշուեկշիռը, հաշուեքննիչի տեղեկագիրը  
եւ 1974 տարւոյ պիտունի նախահաշիւը:  
Այս կապակցութեամբ ներկաներուն տեղե-  
կութիւններ տրուեցան հասոյթներու եւ  
ծախսերու շուրջ: Նոյնպէս եղան հարցում-  
ներ, որոնց զոճացուցիչ բացատրութիւններ  
տրուեցան:

Կարն զաւարե մը ետք ժողովը անցաւ  
նոր վարչականներու ընտրութեանց. փոխա-  
րէն դադրած երկու վարչական անդամնե-  
րու: Ուստի վերընտրուեցան ՊՊ. Ժորժ Մի-  
քայլեան եւ Յակոբ Ժամկոչեան: Պր. Կա-  
րո Ներեւեան վերընտրուեցաւ հաշուեքն-  
նիչի պաշտօնին:

Ժողովը փակուեցաւ ժամը 6:30ին:

Նոյն օրը վարչութիւնը գումարեց իր  
առաջին նիստը, ուր ընտրեց իր գիւսանը  
հետեւեալ ձեւով.—

Տեաքք - ՅԱԿՈՒ ԷՔՍԷՐՃԵԱՆ Ատենապետ  
 ԺՈՐԺ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Բ. Ատենապետ  
 ՆՈՐԱՅՐ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ Ատենապալիք  
 ՀԱՅԿ ԻՐԱՏԵԱՆ Գանձապետ  
 ԺԱԳ ՄԵՍՐՈՊԵԱՆ Խորհրդական  
 ՅԱԿՈՒ ԺԱՄԿՈՉԵԱՆ »  
 ՅԱԿՈՒ Մ. ԲԱՄՊՈՒՔՃԵԱՆ »

Այժմ կոտանք \* \* \*  
 րոյական տեղեկագիրք:

Գահիրէի Հ. Բ. Հ. Միութեան Ընդհանուր  
 Ժողովը տեղի ունեցաւ Ուրբաթ, 30  
 Մարտ 1973ին: Ըստ օրինի գաղտնի քուէ-  
 արկութեամբ վերընտրուեցան ՊՊ. Հայկ  
 Իրատեան, Ժագ Մեսրոպեան եւ ընտրուե-  
 ցաւ Պր. Յակոբ Մ. Բամպուքճեան:

Նորընտիր վարչութիւնը իր առաջին  
 նիստին որ կայացաւ նոյն օրը, ընտրեց  
 իր գլխանը հետեւեալ ձեւով -

ՊՊ.- ՅԱԿՈՒ ԷՔՍԷՐՃԵԱՆ Ատենապետ  
 ԺՈՐԺ ՄԻՔԱՅԷԼԷԱՆ Բ. Ատենապետ  
 ՆՈՐԱՅՐ ՏԷՕՎԼԷԹԵԱՆ Ատենապալիք  
 ՀԱՅԿ ԻՐԱՏԵԱՆ Գանձապետ  
 ԺԱԳ ՄԵՍՐՈՊԵԱՆ Խորհրդական  
 ՅԱԿՈՒ ԺԱՄԿՈՉԵԱՆ »  
 ՅԱԿՈՒ Մ. ԲԱՄՊՈՒՔՃԵԱՆ »

**ՈՂԲԱՑԵԱԼ.-**

1973 տարեշրջանին Միութիւնս կոր-  
 սընցուց իր հետեւեալ արժանաւոր անդամ-  
 ները. - Վահան Սարեան, Յարութիւն Սիւր-  
 մէնեան, Գէորգ Բամպուքճեան, Գրիգոր  
 Պասմաճեան, Տոքթ. Նորայր Մահսերեճ-  
 եան, Նազարէթ Գալֆայեան, Լեւոն Գա-  
 լէմքէրեան եւ Սիսակ Շալճեան: Այս տը-  
 խուր պատեհութեամբ, վարչութիւնս նա-  
 մակով կամ ծաղկեպսակով յայտնեց իր ցա-  
 ւակցութիւնները ողբացեալներու պարա-  
 գաներուն:

**ԱՆԴԱՄԱԿԱՆ.-**

Իրաւասու անդամներուն սոյն տարե-  
 շրջանը փակուած է 197 երկսեռ անդամ-  
 ներով, անցեալ տարուան 196 անդամնե-  
 լու փոխարէն, իսկ անչափահաս անդամ  
 ունեցած ենք 38 անդամ, 54 անդամնե-  
 րու փոխարէն: Վերոյիշեալ բոլոր անդամնե-  
 րը 1973 տարեշրջանին կատարած են ի-  
 րենց անդամական պարտականութիւնները:  
 Թէև անդամներուն թիւը պակասած է մա-

հերու եւ մեկնումներու պատճառաւ, սա-  
 կայն միւս կողմէ ունեցած ենք նոր ան-  
 դամներ: Հոս ըսենք թէ վարչութիւնս պի-  
 տի շարունակէ անդամարշաւը, որուն վըս-  
 տահ ենք թէ շատեր սիրով պիտի ընդա-  
 աջեն մեր առաջարկին:

**«ՏԵՂԵԿԱՏՈՒ» ՊԱՐԲԵՐԱԹԵՐԹ.-**

Այս տարեշրջանին կարողացանք հը-  
 րատարակել երեք թիւ «Տեղեկատու»  
 Պարբերութիւններ: Առաջինը՝ Մարտ ամ-  
 սըլայ վերջը, նուիրուած վարդանանց Հե-  
 րոսամարտին: Երկրորդը՝ Յունիսի վերջը,  
 նուիրուած Հ. Բ. Հ. Միութեան 67րդ տարե-  
 դարձին, իսկ երրորդը Դեկտեմբեր ամ-  
 սըլայ վերջը նուիրուած Ս. Ներսէս Շնոր-  
 հալիի վախճանման 800ամեակին: «Տեղե-  
 կատուն» որ ձրիօրէն կը բաժնուի Միու-  
 թեանս Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ ան-  
 դամներուն, ծանր բեռ մըն է վարչու-  
 թեանս ուսերուն վրայ, ըլլայ ան նիւթա-  
 կան կամ զանազան աշխատանքներու ա-  
 ունչութեամբ: Առ այդ կը ջանանք հրա-  
 տարակել երեք ամիսը անգամ մը աւելի  
 ճոխացեալ բովանդակութեամբ: Այս առ-  
 քի փափաքելի է որ մեր անդամները նը-  
 կաւի ունեցան «Տեղեկատու»ի ֆոնտը, ի-  
 բեց ըրած նուիրատուութեանց ժամանակ:  
 Նաեւ որպէսզի «Տեղեկատու»ն ըլլայ ա-  
 ւելի նոյն եւ հետաքրքրական, կը հրաւիրենք  
 մեր անդամներուն եւ համակիրներուն, որ  
 աշխատակցին ուղարկելով յօդուածներ կամ  
 զանազան լուրեր:

**1973ի ՊԱՏԻ ՕՐԱՑՈՅՑ.-**

Ինչպէս ամէն տարի այս տարի եւս  
 Միութեանս հրատարակ հանած պատի օ-  
 րացոյցը, հասարակութեան ջերմ ընդունե-  
 լութեան արժանացաւ: Տպագրեցինք 500  
 օրինակ, օրաթերթիկներով եւ ազգային-կրօ-  
 նական տօներու յիշատակութեամբ: Օրա-  
 ցոյցը զարդանկարուած էր Մայր Հայրե-  
 նիքէն ստացուած «Արարատ Լեռ»ան նը-  
 կարով: Նոյնպէս օգտագործեցինք ծովա-  
 նկարիչ Արսէն Շապանեանի եւ նկարիչ Ա-  
 շոտ Զօրեանի հայրենի գեղեցիկ բնանկար-  
 ները: Ուրախութեամբ կ'արձանագրենք թէ  
 ամբողջութեամբ սպառած են, սատարելով  
 Միութեան փրփականտին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆՆԵՐ.

Պէտք է ըսել թէ 1973ի ընթացքին երիտասարդական շարժումը մեծ գործունէութիւն մը չունեցաւ վերջին Միջին Արեւելքի պատերազմին պատճառաւ: Ուրբաթ, 12 Յունուար 1973ին, տեղի ունեցաւ Ընդունելութիւն-Թէյասեղան մը ի պատիւ Հ.Բ.Ը.Միութեան Յովակիմեան սաներուն, Նոր Տարւոյ և Սուրբ Ծնունդի աւթիւ, Միութեանս հաւաքավայրին մէջ: Ուրբաթ օրեր անսնք ունեցան հարցամրցումներ, մշակութային խաղեր կամ շարադրութեան մրցումներ: Մշակութային Երիտասարդաց Մարմինը իր մասնակցութիւնը բերաւ նաև երիտասարդական Փառատօններու: Հինգշաբթի, 2 Օգոստոսին Մասնաժողովիս կազմակերպութեամբ սաները գացին դէպի «Լոյս և Ձայն» ներկայացման, որ վստահ ենք թէ կենսական են այս տեսակի պտոյտները: Այժմ կը յայտարարենք թէ վարչութիւնս որոշած է վերսկսիլ Մեսրոպեան Դասախօսութեանց շարքին, այժմէական հարցերու շուրջ:

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ, ՍԱՆԵՐ.

Կուզենք ըսել թէ սերտ գործակցութիւն կայ Մասնաժողովիս և Կեդր. Յանձնաժողովին ինչպէս նաև Յովակիմեան Սանուց Յանձնախումբի միջև:

Աւստի 1973-1974 տարի շրջաններուն, Յովակիմեան կրթաթոշակով Միութիւնս կը պահէ 7 սանուհի և 1 սան, որոնցմէ 5 երկսեռ սաներ Աղեքսանդրիա և 11 սաներ ալ Գահիրէ կը գտնուին:

Գահիրէի 11 սաներէն 6ը՝ Տան Պոսթոյի արհեստագիտական վարժարանը կը յաճախեն, երկու սաներ՝ էլ Սալամ Քուլէճ, մէկ սան՝ Էքօլ Տէ Սէօր Ֆրանսիսքէն, մէկ սան՝ Սենթ Ժորժ Գոլէճ և մէկ սան ալ Սէնթ Քլէրգ Գոլէճ: Վերոյիշեալ սաներուն կրթաթոշակներու և յարակից ծախսերու համար սահմանուած է մօտաւորապէս 1050 Ե Ո՛:

Ոոյն Ֆոնտի մատակարարութեամբ կը զբաղի Յովակիմեան Սանուց Յանձնախումբը, յանձինն՝ ՊՊ. Հայկազուն Բիւրքճեան, Ժորժ Միքայէլեան և Տիգրան Պապիկեան:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ.

Վարչութիւնս որոշած էր տարեկան ձեռնարկ մը սարքել, Շաբաթ, 27 Հոկտ. 1973ին, սակայն կամքէ անկախ բոլորիս ծանօթ պատճառով տեղի չունեցաւ: Արդարև որոշուած է յաջորդիւ ձեռնարկ մը սարքել, քանի որ Հ.Բ.Ը.Միութեան ցրկեանս Նախագահ Ալեք Մանուկեանի նախագահութեան 20ամեակն է:

ԵԱԳՈՒՊ ԱՐԹԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ.

Մեր բարեյիշատակ հիմնադիրներէն Եագուպ Արթին Փաշայի անուան ի յիշատակ գրադարանը, այժմ բաւական ճոխացած է, մասնաւորապէս հայրենի կառավարութեան ղրկած հրատարակութիւններով: Նոյնպէս կը ստանանք թերթեր և պարբերաթերթեր, որոնք իրենց առաքումներով կը քաջալերեն հայապահպանման գծով մեր տարած համեստ աշխատանքը:

ՇՆՈՐ ՀԱԿԱՂԻՔ.

Վերջացնելէ առաջ մեր այս ամփոփ տեղեկագիրը, կը փութանք մեր ջերմագին շնորհակալութիւնները յայտնել Եգիպտոսի բարեխնամ կառավարութեան և անոր վսեմաշուք Նախագահ՝ Մոհամէտ Անուար էլ Սատաթին: Այս աւթիւ արաբ հիւրընկալ ժողովուրդին կը մաղթենք գըրաւեալ հողերու ազատագրում և արաբ ազգին գերագոյն ձգտումներու իրականացում: Ընկերային Գործոց Նախարարութեան, Պետական Շրջանային Կեդրոնին և Էզպէքիէի Պահականոցի պաշտօնատարներուն, որոնց կը պարտինք մեր մշակութային գործունէութեան հսկողութիւնը ամենայն ազատութեամբ և զուտ հայկական շրջանակէ ներս: Նոյնպէս կ'արձանագրենք մեր շնորհակալիքը Միութեանս Եգիպտոսի Կեդրոնական Յանձնաժողովի պատուարժան վարչութեան և հայ մամուլին, որոնք անվերապահօրէն դիւրացուցած են մեր աշխատանքները և վերջապէս ամէն անոնց որոնք կը ջանան վառ պահել մեր կեանքը լուսազարդող՝ Հ.Բ.Ը.Միութիւնը:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷԻ Հ.Բ.Ը. ՄԻՈՒԹԵՆԷՆ ՆԵՐՈՒ

# ՊՐ. ՎԱՐՈՒԺԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ (Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ «ՄԵԾԱՊԱՏԻԻ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐ» ՈՒ ԱՆԳԼԵՐԷՆ ԼԵԶՈՒՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԹԻԻ)

Ուրբաթ, 14 Յունիս 1974, Կ.Ե. Ժամը 7.30ին, Հ.Բ.Ը.Միութեան Հաւաքավայրին մէջ տեղի ունեցաւ հետաքրքրական հարցազրոյց մը, Պր. Վարուժան Երեւանի հետ, ի ներկայութեան վարչականներու և Միութեանս ուսանողներու:

Պր. Վ. Երեւան ինչպէս գիտենք, վերջերս երգիծագիր Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկաններ» ընդհանուր թարգմանած և թատերգութեան վերածած էր, որը ներկայացուցեցաւ Ամերիկեան համալսարանի աշակերտութեան կողմէ: Բաց աստի, ան ուսանող է «էյին Շամս» Համալսարանի մէջ, հետեւելով ճարտարագիտութեան ճիւղին: Նոյնպէս գրած է կարգ մը քանաստեղծութիւններ, պատմութեան քննարկներ, առակներ և թատերգութիւններ: Զի մտնանք նաև յիշելու, թէ ան էր որ առաջինը հանդիսացաւ 1971 տարեշրջանին Գահիրէի Հ.Բ.Ը.Մ.ի Երկու Մշակութային Մարմնի կազմակերպած Պարգեւաւոր Մըրցանքին:

Երեկոյթին բացումը կատարեց Մասնաժողովի Ժրջան ատենապետ Պր. Յակոբ Էքսէրճեան, ուր ներկայացնելէ ետք օրուան դասախօսը, յայտնեց թէ լայն գրչանհատանքի արժանացած է օտարներուն կողմէ, նոյնպէս եգիպտահայ գաղութը արժէքաւոր գործ մը կը համարէ Պր. Վ. Երեւանի տարած աշխատանքը, քանի որ այսպէսով օտար հասարակութեան ծանօթացում կ'ըլլանք հայկական արուեստն ու մշակոյթը, որը անուղղակիօրէն կը նըպաստէ ազգապահպանման նուիրական գործին:

Պր. Վարուժան Երեւան անկեղծօրէն պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն՝ թէ ի՞նչն էր որ զինք մղած էր այս աշխատանքը ձեռնարկելու, կամ ի՞նչ փոփոխութիւններու ենթարկած էր և ինչո՞ւ

յատկապէս այս թատերգութիւնը ընտրած էր, ու այսպիսի զանազան այլ հարցումներու:

Ներկաները հետաքրքրութեամբ ունէ կընդրեցին սոյն շահեկան հարցազրոյցը: Ապա Պր. Էքսէրճեանի քաջալերական և շնորհակալական խօսքերէն հտք վերջ գըտաւ ժամը 9ին:

Իսկապէս գովելի է խոստմնալից երկտասարգ Վարուժան Երեւանի տարած գործը և կը յուսանք ուրիշ ստիճաններով ևս իմանալ զինք, մաղթելով նորանոր յաջողութիւններ:

ՆԵՐԿԱՅ ՄՐԸ

## ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍԻ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԵՐԵՐԳ. ՎՐԺ.Ի ԻԲԻՏ. ՄՈՒՐՁԱԿԱՆ ԵՒ ՄՇԿ.ԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՒԻ ՀԻՄՆԱՔՈՐԻ ԶԵՏԵՂՄԱՆ ՓԱՌԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Հ.Բ.Ը.Միութեան Մարի Մանուկեան իրկրդ. վարժարանի ուսումնական անդրանիկ տարեշրջանի բացումը, ինչպէս նաև Երիտասարդական Մարզական ու Մշակութային Կեդրոնին հիմնարկէքին փառաշուք հանդիսութիւնները տեղի ունեցան Կիրակի, 17 Մարտ 1974ին:

Առաւօտեան ժամը 11ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցոյ մէջ, ներկայութեամբ բազմահարիւր միութենականներու և համակիրներու, գլխաւորութեամբ Հ.Բ.Ը Միութեան Կեդր. Վարչական Ժողովի բազմամեայ անդամ Տիար Տիգրան Սմարեանին և Թէքէեան Մշակ. Միութեան Հիմնադիրներու Մարմնի ներկայացուցիչ Երուանդ Պապայեանին և բազմաթիւ հայ ու տեղացի բարձրաստիճան անձնակորութիւններու, կատարուեցաւ հոգեհանգրատեան պաշտօն՝ մեղմէ անդարձ մեկնող

միութենական անդամներու, բարեբարնե-  
րու և ազգային մշակներու հոգիներուն  
համար:

Պատարագէն յետոյ, բազմութիւնը  
փոխադրուեցաւ Հ.Բ.Ը.Միութեան սեփա-  
կանութիւն եղող հողամասը, ուր շուրջ ե-  
րեք ամիսէ ի վեր սկսուած են մեր շինա-  
րարական աշխատանքները: Հոն կատար-  
ուեցաւ հիմնարկէքի կրօնական արարողու-  
թիւնը Հարաւ. Ամերիկահայոց Կաթողիկո-  
սական Պատուիրակի փոխանորդ Հոգ. Տ.  
Յարութիւն Մ. Վրդ: Մուշեանի կողմէ:  
Հուսկ ուրեմն տեղատարափ ծափերու տակ  
հրաւիրուեցաւ Թէքէեան Մշակութային  
Միութեան Հիմնադիրներու Մարմնի ներ-  
կայացուցիչը և Հ.Բ.Ը.Միութեան Կեդր.  
Վարչական Ժողովի անդամը Ժեփելու հա-  
մար առաջին քարը: Այդ հակիրճ արարու-  
թեանէն ետք, Առեւտոս պողոտան լեցնող  
բազմութիւնը միաձայն և լիաթոք երգեց  
արժանթիւնեան ազգային քայլերզը, որուն  
յաջորդեց Մարի Մանուկեան Երկրդ. վար-  
ժարանին բացումը:

Ներկայ եղող բազմութիւնը Մասնա-  
ճիւղիս Մարի Մանուկեան դպրոցաշէնքը  
այցելելէ ետք, բոլորն ալ անցան Սարգիս  
Պենկեան սրահը, ուր ի պատիւ դպրոցա-  
շէնքի բարեբարներուն կամ անոնց անմի-  
ջական պարագաներուն, ճաշկերոյթ մը  
սարքուած էր: Այդ ճաշկերոյթին ընթաց-  
քին գործադրուեցաւ հանդիսութեան պաշ-  
տօնական յայտագիրը: Խօսք առին վար-  
չութեան անունով Մասնաճիւղին վարիչ  
քարտուղար Պր. Խաչիկ Ճանոյեանը, Կեդր.  
Ժողովի անունով բարեմաղթութիւններ  
յայտնեց Տիար Սմարեանը, կուռ ճառով  
մը Տիար Երուանդ Պապայեան ներկանե-  
րուն փոխանցեց Թէքէեան Մշակութային  
Միութեան բազմահազար անդամներուն  
ողջոյններն ու սրտագին բարեմաղթու-  
թիւնները, խօսք առին նաև կրթական  
նախարարութեան ներկայացուցիչն ու  
ներքին գործոց նախարարութեան ներկա-  
յացուցիչը:

Այդ հանդիսութեան հրապարակաւ  
կարդացուեցան Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա.  
Ամենայն Հայոց Կաթողիկոսին, Սփիւռքա-  
հայութեան հետ Մշակութային Կապի Կո-

միտէի նախագահ Տիար Վ. Համազասպ-  
եանի և Բարեգործականի նախագահ Տիար  
Ալեք Մանուկեանի հեռագիրներն ու քոյր  
մասնաճիւղերուն ու միութեանց շնորհա-  
ւորական նամակներն ու հեռագիրները:

Բոլոր ներկաները, անխառն գոնու-  
նակութեամբ և Բարեգործականի օժան-  
դակելու անկեղծ պատրաստակամութիւն  
յայտնելով, մեկնեցան սրահէն:

Հ.Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐԻ ԿԵԱՆՔԷՆ

## ՇԱՄ ԷԼ ՆԷՍԻՄԸ Հ Մ.Ը.Մ.-ՆՈՒՊԱՐԷՆ ՆԵՐՍ

Աւանդութիւն դարձած Շամ էլ Նէ-  
սիմ՝ գարնանային օրը տօնուեցաւ Հելիո-  
պոլսոյ Հ.Մ.Ը.Մ.-Նուպարէն ներս Երկու-  
շարթի, 15 Ապրիլ 1974 առաւօտէն մինչև  
գիշեր:

Բազմահարիւր Հ.Մ.Ը.Մ.-Նուպարի  
անդամներ, համակիրներ և ազգայիններ  
եկած էին գարնանային այս տօնը միասին  
անցընելու: Ներկաները տեղաւորուած վը-  
րանածածկ պարտէզին մէջ սեղաններու  
շուրջ շէնշող մթնոլորտի մէջ հաճելի օր  
մը անցուցին: Հ.Մ.Ը.Մ.-Նուպարի վարչա-  
կաններն ու օժանդակ յանձնախումբի ան-  
դամներն ու անդամուհիները ոչ մէկ ճիգ  
խնայեցին գոհ ձգելու համար ներկաները,  
որոնց սպասարկուեցաւ համադամ կերա-  
կուրներ, առատ զովացուցիչներ ու անու-  
շեղէններ: Տեղի ունեցաւ ճոխ պարգևնե-  
րով վիճակահանութիւն մը, փոքրերը հա-  
ճելի պահեր անցուցին ձեռնածուի մը հե-  
տաքրքրաշարժ փորձերէն: Երեկոյեան ե-  
րիտասարները անընդհատ պարեցին Միաց-  
եալ Ազգերու Կազմակերպութեան ստիպո-  
ղական ոյժերու «Րէնչս Տէնս Պէնտ» նուա-  
գախումբի հնչիւններու տակ: Ներկաները  
մեկնեցան գարնանային այս տօնը հայկա-  
կան մթնոլորտի մէջ միասնաբար հաճելի  
կերպով անցուցած ըլլալու գոհունակու-  
թեամբ:

Ա.



# ԱՄԱՌՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԻ ԲԱՑՈՒՄԸ Հ.Մ.Ը.Մ. - ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.-նուպարի այս տարուան ա-  
մառնային եղանակի բացումը տեղի ունե-  
ցաւ Ուրբաթ, 31 Մայիս 1974 երեկոյեան  
ժամը 10ին, Մարզարանին օդատուն և կա-  
նանչազարդ պարտէզին մէջ, հոծ բազ-  
մութեան մը ներկայութեան:

Երեկոյթը առաւել փայլ մը ստացաւ,  
երբ պատիւը ունեցանք վայելելու ներկա-  
յութիւնը Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Վեհա-  
փառ Հայրապետի պատուիրակներուն,  
յանձինս՝ Ս. Էջմիածնի դիւանապետ Գերշ.  
Տ. Արսէն Ս. Եպս. Պէրպէրեանի և «Էջմիա-  
ծին» ամսագրի խմբագիր Փրոֆ. Արթուր  
Հատիտեանի:

Հայկական և եւրոպական նորագոյն  
եղանակներու շէնչող մթնոլորտի մէջ,  
բացուեցաւ «Օփըն Պիւֆէ»ն: Խիստ կար-  
գապահութեամբ և բոլորին գոհացում տա-  
լու տրամադրութեամբ, Տիկնանց Յանձ-  
նախումբի կողմէ հրամցուեցան ճոխ ու  
սլլազան ճաշերու տեսակներ:

Ուշ գիշեր էր երբ ներկաները խիստ  
գոհունակութեամբ մեկնեցան Մարզարա-  
նէն:

Մեր ջերմ շնորհակալութիւնները կը  
յայտնենք վարչական կազմին և յատկա-  
պէս Տիկնանց Յանձնախումբի անդամու-  
հիններուն, որոնք ամէն առթիւ գործի կը  
լծուին ու ջանք չեն խնայեր, սաանձնելով  
ամէն գոհողութիւն: Նորանոր յաջողու-  
թիւններ կը մաղթենք:

ՆԵՐԿԱՅ ՄԸ

## Հ.Բ.Ը.Մ. - ԳԱՅԻՐԷ

Շաբաթ, 5 Հոկտեմբեր 1974

## ԴԱՇՏԱ ՀԱՆԴԷՍ

Մանրամասնօրինակները յաջորդիւ

կը խնդրուի չխաջածեել

# ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այս տարի, ինչպէս գիտեմք, ափռու-  
քի բնոր կայութիւնը հանդիսանորսպէս  
կը նշէ Միւլքեանի կորովի Յկեանու  
Նախագահ Տիար Աշխ Մանուկեանի  
Նախագահութեան 20ամեակը:

Այս առիւթ կը խնդրեմք մեր յարգե-  
լի աշխատակիցներէն ու թղթակիցներէն,  
որ եթէ կը փախափին յոյուածներ դըր-  
կել իրենց երախտագիտութեան զգա-  
ցումները յայտնելու, մեր սիրելի նախա-  
գահին յագործութեան 20ամեակի առ-  
թիւ, թող բարեհաճին ողորկել միևնույն  
15 Օգոստոս 1974, Պարբերաբերքիս  
հասցէին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

## Հ.Բ.Ը.Մ.ՈՒԹԻՒՆ - ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ

### ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԵՒ ԿԱՅՏԱԿԱՆ ՃԱՄՊՈՐԻ ԱՂԵՔՍԱՆԴՐԻՍ Հ.Մ.Ը.Մ. - ՆՈՒՊԱՐԻ ՄԷՋ

Կիրակի, 21 Ապրիլ 1974, երեկոյեան ժա-  
մը 6ին, Հ.Մ.Ը.Մ.-նուպարի Սկառիտական եւ  
Կայսական Շարժումը Միջակում, այն ժամանակ  
էր կապակապիտում եր իր մարզայաշէն վը-  
րայ, մասնակցութեամբ տեղոյս հայ եւ օտար  
խումբերուն: Տեղի ունեցաւ տղանցք, բարեւ  
դրօշի, այլապէս խաղեր եւ ի վերջոյ խառնիկ-  
հանդէս: Յայտագիրը վարեց յսմուն Սկառի-  
տական Վերին Մարմինի՝ Տոքթ. Կարո Անտուր-  
եան:

Այս առիթէն օգտուելով տեղի ունեցաւ նոր  
ասիականներու տոյքի մը՝ Արժուիկներու փոխ-  
խախախտմանի տասնամի Օր. Զայեղ Խուն-  
կանեանի, Կայսերու խախախտմանի Տիկ. Լիւսի  
Փիլիպեանի, Գայլիկներու Ազգայն Տիարան Դա-  
ւիթեանի, Գայլիկներու Պաշտ Պեթիկ Օրջան-  
եանի, վարիչ-առաջնորդ Կար. Լիւրիկեանի,  
փոխ-խախախտման Անդրանիկ Մկրտչեանի իսկ Ա-  
ւազ-պէտի տասնամի Տոքթ. Կարո Անտուրեանի:  
Ջերմօրէն կը շնորհաւորեմք թղթիկն եւ նորա-  
նոր նուանուներ կը մաղթեմք իրենց:

# ՅՈՒՐԵԼԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

ՄԻՈՒԹԵԱՆՍ ՑԿԵԱՆՍ ՆԱԽԱԳԱՀ Տ. ԱԼԵԲ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻՆ  
ԵՒ Ի ՊԱՏԻԻ ՄԻՈՒԹԵԱՆՍ ՎԵԹԵՐԱՆ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ

Կիրակի, 2 Յունիս 1974, երեկոյեան ժամը 7:30ին, Ադեֆսանդրիոյ Հ. Մ.Ը.Մ.-Նուպարի կանանցագարդ պարսեզին մէջ տեղի ունեցաւ Յորտիլնական հանդիսութիւն մը ձօնուած Հ.Բ.Ը.Միութեան Յկեանս Նախագահ Տիար Աղեֆ Մանուկեանի նախագահութեան 20-ամեակին եւ ի պատիւ Միութեանս Վեթերան Անդամներու, հովանաւորութեամբ Գեղ. Տ. Զաւեն Ս. Եսս. Զինչիկեանի եւ նախագահութեամբ Միութեան Եգիպտոսի Կեդր. Յանձնաժողովի ասեկապէս՝

Տիար Յովհաննէս Քէհեաւեանի եւ ի ներկայութեան հոծ թիւով անդամներու ու համակիրներու:

Այս առթիւ խօսք առին կարգ մը ազգային անձնաւորութիւններ, որուն յայտնեց գեղարուեստական պատշաճ յայտագիր մը: Հանդիսութենէն ետք տեղի ունեցաւ ընդունելութիւն մը ի պատիւ Վեթերան Անդամներուն:

Մեր յայտնող թիւով շայնտեմ պիտի անդրադառնամք սոյն յայտող հանդիսութեան շուրջ:

## ՀՐԱԻՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը այսօր կը հրահարէ Միութեան բոլոր իրաւասու անդամները ներկայ գտնուելու 61րդ Ընդհ. Ժողովին, որ պիտի գումարուի ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 19, 1974. առաւօտեան ժամը 10ին, Առաջնորդարանի Կիւլլապի Կիւլպեցեան Մշակութային Կ'գրոնի Գավոթնեան Սրահին մէջ, 630 Սեքրետ Էվընի, Նիւ Եորք, Ն. Ե., ԱՄՆ:

Ներկայս 61րդ Ընդհ. Ժողովին համար տրուած միակ հրահարագիրն է: Կը խնդրենք հետեւաբար Միութեան յարգով իրաւասու անդամներէն, որ անձնապէս ժողովին ներկայ ըլլան վերոյիշեալ բռնականին եւ կա՛մ ամենէն ուշը մինչեւ Սեպտեմբեր 24, 1974, իրենց փոխանորդագրերը յանձնեն Հ.Բ.Ը.Միութեան Ընդհանուր Տնօրէնին, կամ զանոնք դրկեն հետեւեալ հասցէին.—

Armenian General Benevolent Union  
Central Board of Directors  
628 Second Avenue, New York, N. Y. 10016

### Օ Ր Ա Կ Ա Ր Գ

- 1.- Ներկայացում եւ վաւերացում 1973 տարեշրջանի ընդհանուր տեղեկագրի:
- 2.- Ներկայացում եւ վաւերացում 1973 տարեշրջանի ընդհանուր հաշուետուութեան:
- 3.- Մասնակի ընտրութիւն Կեդրոնական Վարչական Ժողովի:
- 4.- Մասնակի ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի:
- 5.- Առաջարկներ եւ թելագրութիւններ:
- 6.- Գնահատանքի բանաձեւեր:

Ի ԴԻՄԱՑ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ  
 Բ. Ք. ԿՐԵԿԸՐԻ  
 Ատենագիր  
 Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ  
 Ատենապետ

Նիւ Եորք, Ն. Ե. 1974

# Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՄՈՒԼԸ

---

## ՅՈՒՇԱՐԱՐ - ՄԻՈՒԹԻՒՆ

Պատժամաքերք Հ.Բ.Ը. Միութեան  
Հիմնադիր՝ Պողոս Իսաւա Նուպար

## HOOSHARAR - Անգլիերէն Հրասարակութիւն

Հասցէ. — Armenian General Benevolent Union  
628, Second Avenue  
New - York N. Y. 10016.

## ԽՕՍՆԱԿ

Պատժամաքերք Հ. Բ. Ը. Միութեան Լիբանանի  
Շրջանակային Յանձնաժողովի  
Հասցէ. — Նամակասուփ 715, Պէյրութ.

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

Հրասարակութիւն Գահիրէի Հ. Բ. Ը. Միութեան  
Հասցէ. — 15, Էմաս էլ Տիմ փողոց — Գահիրէ  
Փոստակ 717

## ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐ

Հրասարակութիւն Հ. Բ. Ը. Միութեան Եւրոպայի  
Շրջանակային Կեդրոնական Յանձնաժողովի.  
Հասցէ. — 11, Square Alboni Paris 16<sup>me</sup> FRANCE

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ — ԳԱՆԻՐԷ

Գահիրեի Հ. Բ. Ը. Միութիւնը հանոյքն ունի տեղեկացնելու պատուարժան հանրութեան թե, իր հիմնած

### Ե Ա Գ Ո Ւ Պ Ա Ր Թ Ի Ն

գրադարանը որ կը գործէ 1958էն ի վեր, իր տրամադրութեան տակ ունի գրական, պատմական, գեղարուեստական, կրօնական եւ բանասիրական. ինչպէս նաեւ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ գիրքերու նոյն հասարածոյ, որմէ կրնան օգտուիլ մեր ընթերցասէր անդամները եւ Գահիրեի հայութիւնը անխտիր, առանց որեւէ վճարումի:

Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ի Ն

### Տ Ե Ղ Ե Կ Ա Ս Ո Ւ Ն Վ Ն Ա Ր Ո Վ Ի Ի Է

Շնորհակալութեամբ կ'ընդունինք նուիրասուութիւններ, մեր այս ձեռնարկը աւելի նոյն եւ շահեկան ընծայելու համար:

— Ստանալու համար դիմել խմբագրութեան,  
15, Էմաս էլ Տիմ փողոց Ա. յարկ — Գահիրէ

Ստորագրեալս՝

կը նուիրեմ Ե.Դ. ( )

«Տեղեկասու»ի Ֆոնսին:

Ստորագրութիւն



کتابخانه دار وینا

رقم الابداع بدار الكتب ٦١٣

ՏՊ. «ԱՐԳՈՍ» ԳԱՆԻՐԷ — ԷԵՌ. 56864

١ ص ٢٠٠٠